35. ՇՆՈՐՀԱԼԻ ԱՂՋԻԿԸ

Թագավորը դնեց վըր լալին. - Քենե կուզեմ մեկ գեշ եմակ, գեշ ամնիմ մեջ, գեշ մարդում ձեռ, բերա. չէ՛, վիզդի կը զարկիմ:

Ասաց լալեն. - Ուրուսխաթ տու, էրթամ, բերեմ:

Էն տեղեն լալեն էկավ տուն, օխեմ ցորեմ խաշեց, էնեց վռիկ, թաղեց հողե ամնիմ մեջ, տվեց ընձի պես ըռնճպրիմ ձեռ. առավ, գնաց թագավորի հուզուր, թագավոր հարցուց. - Տղես, էդա ի՞նչ կերակուր ա:

Ասաց. - Թագավոր սաղ կենա, կերակուր ա:

- Գիտեմ, կերակուր ա. մերանը ինչից ա:

Ասաց. - Մերանը ցորեն ա:

Ասաց. - Պա ամա՞նը ինչից ա:

Ասաց. - Հողից ա:

Ասաց. - Դու ի՛նչ գործով ես:

Ասաց. - Աստուծո ծառան եմ:

- Որդիս, - ասաց, - մենք հըմենս լե Աստուծո ղուլ ենք, դու ի՛նչ բանով կաշխատիս:

Ասաց. - Ես ըռնճպար եմ:

Էլման դնեց վըր լալին. - Լալա՛:

Ասաց, - Հա, շնքեթլիմ, - ասաց:

- Քենե կուզեմ, - ասաց, - մեկ գեշ եմակ, գեշ ամնի մեջ. գեշ մարդու ձեռ:

Լալեն ռուսխաթ առավ, ետ դարձավ, էկավ տուն. «Լուն ընկի ճակտեն, կեղի խազար կտոր». մըրթըներ կախեց, նստավ տուն, «քրտինք

տվեց վրեն», «քրտինք կուգա, քրտինք կը պաղի»: Էդոր մեկ աղջիկ կա, ըսկի ավլատ-թավլատ չկա, էկավ էդ աղջիկ ընկեավ խոր վիզնուվեր, ասաց. - Ափո՛, հըսօր ըսկի ընձի էմիշ, բան բերեր ես:

Աղջկեն զարկեց. - Ճեյնըմի՛, գնա դեն, - ասաց, - հըմեմ օր քըզի քեյֆ կա, էս օր ընձի չկա:

Սրտի քեարպեն աղջկան էնեց գող ու բոզ:

Աղջիկ գնաց. մեկ սահաթ խաղար զատանց կայնավ, դարձավ, խորն ասաց. - Ի՞նչ վաղտ գողուբեն, բոզուբեն էներ եմ:

Ասաց. - Լավո՛, իմ սրտի քրպեն, թագավոր դնե վըր ընձի. «Քենե կուզեմ մեկ գեշ եմակ, գեշ ամնի մեջ, գեշ մարդու ձեռ, բերա ընձի», մկա չգիտեմ:

Ասաց. - Ափո՛, փրցըցող Աստված կը փրցուցա, քու տուն չավիրի. էդի մեր դռան առջի դռլեճ արտն ա». էդոր խամար էղեր ես շվար. «գարնան սնկյան պես գլոխդ քրքզներ ա»*. Ասաց. - Դե՛, գնա՛, հոխեմ բրինձ ա՛ռ, արի. գնա՛, ժանգռոտ պղինձ մի ա՛ռ, արի, որ քսան տարի սրբած չէղի. մեկ հատ էլ տնփեսեմ՝ գտի, էլ քե լաղա չկա: Ես կը շքեմ, դու տար թագավորին. թագավոր օր ղայիլ չէղավ, ասա՛. «Էսոր ուստեն իմ աղջիկն ա, թո տանի, իմ գլոխ զանի»:

Աղջիկը բերեց, շքեց տնփեսին աղեկ, սիրուն շոր խագուց. սահաթմ մեկ թևեն կախեց, մեկ՝ մեկ թևեն, եմակ տվեց էդ տնփեսի ձեռ, առան, էրկըսով գեացին թագավորի հզուր, գլոի իջուցին:

Թագավոր հարցուց. - Տղես, էդ եմակ ինչ եմակ ա:

Ասաց. - Եմակ ա, թագավոր:

Ասաց. - Գիտեմ, եմակ ա, մերանը ինչից ա:

Ասաց. - Խոտից ա:

Ասաց. - Էսա ամանը ինչ աման ա:

Ասաց. - Աման ա:

Ասաց. - Գինամ, աման ա, մերանը ինչ ա:

Ասաց. - Մերանը պղնձից ա:

Ասաց. - Դու ի՞նչ մարդ ես, ինչ գործ կը կատարես:

Ասաց. - Աստուծո ծառան եմ:

- Տղե՛ս, - ասաց, - մենք հըմենքս լե Աստուծո ծառան ենք. դու ինչ մարդ ես:

Ասաց. - Ես լէ տնփեսա եմ, թագավոր ապրած:

---

* Գարնան սունկ ջոջ կէղնի (ծ.բ.):

Ասաց. - Ապրիս, տղես, դե գնա՛:

Էդ տեղ լալեն ուրախացավ, թագավոր դնեց վըր լալին, ասաց. - Էս մարիֆաթ մըտ քեն չկա, քեն ո՛ն սովըրցուց, քեզնե կուզեմ:

Ասաց. - Թագավոր սաղ մնա, ընձի մեկ խատ աղջիկ կա, տասնըխինգ տարեկան, էն ա:

Ասաց. - Էն աղջկա հող վըր քու գլխուն էղի, գնա, ղուրպան էղի էնոր, չէ՛, քու գլոխ պտի զարկի:

Ասաց թագավոր. - Գնա՛, էն աղջկեն ասա՛, ընձի չառնի:

Լալեն ուրախալեն վազեվազ էկավ տուն, աղջկեն ասաց:

Աղջիկ խոր ասաց.- Գնա՛, թագավորին ասա թե կառնեմ:

Գնաց, թագավորին ասաց:

Ասաց. - Գնա՛, քու աղջկեն ասա, ղալան ինչ կուզա:

Էկավ, աղջկեն ասաց: Աղջիկ ասաց. - Ղալան:

Ասաց. - Խա՛:

Ասաց. - Ընտրնե կուզեմ տասնըխինգ շիշակ. կուզեմ քսան խոչ, կուզեմ եռսուն ասլան, քառսուն ղափլան, հիսուն իտիշ, վաթսուն այկըռ, էթմիշ ջորի, սեքսան դևա, դոխսան խելք, խարիր ֆարասաթ:

Լալեն ուրախելին վազեց, գնաց, թագավորին ասաց:

Թագավոր ասաց. - Լալա, էդ քու աղջիկ ուրիշ բան ա կուզա, էդոր պատասխանը քենե կուզեմ. թե չէ գլոխդի կը զարկեմ:

Ասաց. - Յաման, թագավոր, խոզի կազատես:

Ասաց. - Գնա՛, քու աղջիկ առ արի՛:

Էկավ, աղջիկ առավ, գնաց: Աղջիկ գնաց, ձեռ կապեց թագավորի հուզուր. գլոխ իջուց, ետ կայնավ:

Թագավորը ասաց. - Աղջի՛, ես քե ի՛նչ ասեցի, դու ընձի ինչ ասեցիր. ես թագավորմ էղիմ, դու աղջիկմ էղիս, էդա ղսեն ընձի ասե՛ս:

Ասաց. - Թագավոր սաղ մնա, դաստուր տո՛ւր, էրկու բերան զրուցեմ:

- Քե ռուխսաթ, ասա՛, մեկ խապարմ պակաս էղու, գլոխդի կը զարկեմ:

Ասաց. - Ես տասնըխինգ տարեկան շիշակ եմ. ձի պտի քսան տարեկան ղոչ, որ ուրախութեն էնենք: Ես եռսուն տարեկան ասլան եմ, ձիկ պտի քառսուն տարեկան ղափլան. օր ձի կառավորե: Դու էղեր իս հիսուն տարեկան, քե պտի վաթսուն տարեկան կնիկ: Դու էղեր իս եթմիշ տարեկան, ջորու պես բան մի, քեզնե նյութ չկա, քե պտի սաքսան տարեկան կնիկմ ամայի պենտե: Ես հուստ գտնեմ դոխսան տարվան

խելք, խարիր տարվան ֆարասաթ որ քըզի կնկնութեն էնա, դու էլ ասես թե ընձի կնիկ կա:

Ասաց. - Որդի՛, գնա՛, ես հիսուն տարի թագավորութեն էնեցի. մարդ ընձի չէր ծալեր խոսքով, դու ընձի ծալեցիր. դուն իմ խոգական որդին ես, աղջիկ, քե էրկու խարիր օսկի թարխան կապեցի:

Լալին էլ ասաց. - Դե, էլի՛, գնա ուրիշ տեղ, իմ աչքին էլ չէրևաս. դու ֆայլութենի խարծ իս: